

Ընտիր Հատուածները մանկավարժական, գրական նշանակութեան և նրա կազմակերպութեան մասին խօսելն մեր նպատակը չը լինելով թողնում ենք այդ մի ալ առթիւ, իսկ գալով «Տեսութիւն գրականութեան» կոչած բաժնին, քանի մի խօսք կ'ուղէինք ասել:

Պարոն չորինոզի «Տեսութիւն գրականութեան» կոչած բաժինը ամբողջովին թարգմանութիւն է և կամ մեղմօրէն ասելով՝ փոխադրութիւն է ռուսերէն «Учебная Теория Словесности.» Н. Минина. С. П. 1881. գրքից, որից հանած է տաղաչափութեան վերաբերեալ կտորը միայն, Զեկուցողիս կարծիքով, պէտք էր նախ՝ աղբիւրն վիշել և երկրորդ՝ աւելի մշակել այդ բաժինը, աչքի առաջ ունենալով և ալ այդ տեսակ գրքեր և ոչ թէ միայն մի գրքից թարգմանել, որի տեսութեան հիմնական գաղափարներն վիճելի են:

Վերջացնելով մեր ղեկուցումը Ընտիր Հատուածների մասին, պարտք ենք համարում լանձնարարել այս գիրքը մեր հայերէնի ուսուցիչներին, որ իւր առատ նիւթով շատ օգտակար կարող է լինել դպրոցներում իբրև մատենագրական ճաշակ զարգացնող և շարադրութիւններին ուղղութիւն տուող առաջնորդ:

Ք.

ՆԻԻԹԵՐ ԱՆԴՐԱԿՈՎԱԿԱՍԵԱՆ ԵՐԿՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԻՒՂԱՑԻՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ. Հրատարակութիւն Պետակ. կալաժները Մինխտորի հաւատարմատար կովկասում—Ի. Ի. Տիխէեւի. Թիֆլիս, 7 մեծագիր հատորներ, 2-ժալ, բոլորը միասին 5525 եր. տառ № 12.

Այս նշանաւոր հրատարակութիւնները պատկանում են մեր դարու ամենանշանաւորներին՝ Անդրկովկասի վերաբերեալ Նոքա մեծ դեր պիտի խաղան մեր երկրի գիւղական կեանքին վերաբերեալ գրականութեան ու օրէնսդրութեան մէջ: Նոքա զուրկ չեն թերութիւններից, բաց քննադատել նոցա ամբողջութիւնը դեռ. ևս անհնարին է: Մեր առաջին պարտականութիւնն է ծանօթացնել նոցա բովանդակութեան հետ, որը չափազանց հարուստ է: Այդքան հարուստ նիւթի հետ ծանօթացնելու ամենալարմար միջոցն ենք համարում՝ ուղղակի դնել ընթերցողի առջև գրքերի բովանդակութիւնը, չառաջաբանը, հրահանգը և ծրագիրը, որով հաւաքւած են նիւթերը: Այս անգամ տալիս ենք չառաջաբանի և բովանդակութեան թարգմանութիւնը, թողնելով միւս անգամին ծանօթացնելու հրահանգի և ծրագրի հետ:

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն.

Անդրկովկասեան երկրի հինգ նահանգների (Թիֆլիսի, Գուլիսի, Երևանի, Գանձակի և Բաքուի) տէրունական ընակեցրած տեղերի տարածութիւնը ճշգրտեամբ չօվւած չեն, բաց, մօտաւորական հաշւով, նոքա

կազմում են մօտ 3,800,000 դեսնատին ¹⁾։ Այդ հողերի վրայ կա 4,061 գիւղ, որոնց մէջ, կամերալի հաշուով (1872 թ.), կա 223,081 տուն և 803,895 հոգի արական սեռի։

Վերոյիշեալ թւերը ցոյց են տալիս, որ կանոնաւոր վերաբերմունքից դէպի տէրունական, բնակեցրած հողերը կախած է երկրիս հարկատու ազգաբնակչութեան մի նշանաւոր մասի բարօրութիւնը և, ուրեմն, նորա արդէնաբերական ուժի զարգացումը։ Բայց Անդրկովկասի տնտեսական պայմանները այնպէս են, որ ժողովրդի բարեկենցաղութիւնը միմիայն ծխաբաժին ²⁾ հողերի մեծութիւնից չէ կախած։ Երկրի շատ տեղերում հողը ոչ մի գին չունի մշակութեան համար, եթէ նորան չը ջրեն։ Ուրեմն, բաւարար և ապահով հող ունենալուց զատ, պէտք է հողալ, որ գիւղացիները բաւականաչափ և ապահով կերպով ջրից օգտուի կարողանան։ Բացի դորանից, լեռնալիճ և դաշտալիճ տէրունական արօտատեղերի, այն է՝ ելլաղների և կիշաղների առատութիւնը (մինչև 3,000,000 դես.) առաջացրել է անասնապահութեան զարգացումը, որը ազգաբնակչութեան մի նշանաւոր մասի բարեկենցաղութեան հիւմքն է կազմում։ Ջրից և տէրունական արօտատեղերից օգտուելու խնդրի բաւարար լուծումից կախած է ոչ միայն պետական գիւղացիների, այլ և Անդրկովկասեան երկրի ազգաբնակչութեան մեծամասնութեան բարօրութիւնը։

Պետական կալւածների պ. մինիստրը, պետական-քարտուղար Մ. Պ. Օստրովսկին, 1883 թ. Կովկասում եղած ժամանակ, ցոյց տուց իւր հաւատարմատարին ³⁾ այն կապը, որը կա տէրունական գիւղացիների հողալիճ խնդրի և ջրից և արօտատեղերից օգտուելու օրէնքների խնդրի մէջ։ Ընդամեն, Նորին Գերապալծառութիւնը, համաձայնութեամբ Կովկասի քաղաքացիական բաժնի Կառավարչապետ իշխ. Ա. Մ. Դօնդուկով-Կորսակովի, դժադրեց այն հիմունքները, որոնց վրայ պիտի հիմնէր վիշալ խնդիրների մասին օրէնքների նախագիծը։

Արօտատեղերի մասին խնդիրը արդէն իւր լուծումն ստացաւ օրէնսդրական կարգով, այն հիմունքներին համաձայն, որոնք ներկայացրած են մինիստրների կոմիտեայի բարձրագոյն հաստատւած որոշման մէջ ⁴⁾։

1) Մի դեսնատինը հաւասար է 60 սաժէն երկարութիւն և 40 սաժէն լայնութիւն ունեցող, ուրեմն 2400 քառակուսի սաժէն տարածութեան և ֆրանսիական 109 1/2 արէն (are)։

2) Գիւղական հողերը, երբ նոքա առանձին մարդկանց սեպհականութիւն չեն, այլ ամբողջ գիւղին է թողած օգտուելու, բաժանում են գիւղացիներէ մէջ կամ արներէ (ծովսերէ) և կամ կարելիքին մասնակցող մարդկանց թւի համեմատ։ Մէկ բաժինը, ուրեմն, ծխաբաժին է կամ մարդաբաժին, ռուսերէն наделъ, подымный կամ подушный наделъ։

3) Տիբէեւ Իւան Իւանովիչ, դադանի խորհրդական, որը գլուխ է Կովկասի պետական կալւածների կառավարութեան սկսած 1880 թւէն։

4) Որք հետ անշուշտ կը ծանօթացնենք մեր ընթերցողներին։

Ջրի վերաբերեալ օրինագծեր պատրաստելու համար հարկաւոր դատւեց Թիֆլիսում մի Մասնաժողով գումարել, կազմած զանազան մարդկանցից, որոնց մասնագիտութիւնները կապ ունին առաջադրած խնդրի հետ, որպէս նաև ջրանցքների փորձած տէրերից և միրաքներից: Այդ Մասնաժողովից 1883-ին մշակւած «օրինագիծը ջրից օգտուելու իրաւունքի և Անդերկովկասում ջրանցքներ անցնելու կարգի մասին» տւած է ալժմ բարձրագոյն կառավարչական հիմնարկութիւնների հաւեցողութեան:

Անմիջապէս ձեռնարկել պետական գիւղացիների հողաւին խնդիրը վերջնականապէս լուծելու գործին անհնարին եղաւ, որովհետև դորա համար տեղեկութիւնները պակասում էին: Անդրկովկասի գիւղացիների մասին տեղեկութիւնները վերաբերում են միմիայն նոցա ծուխերի և շունչների թւին: Բացի այդ, չափոնի չէ, թէ ինչպէս են գիւղացիները օգտուում գիւղական ամեն կարգի հողերից. չափոնի չէ նոյնպէս, թէ գիւղացիք առ միշտ հողերը իրար մէջ բաժանել են, թէ օգտուում են համաճանական սկզբունքով հողը ընդհանուր համարելով և ժամանակ առ ժամանակ բաժանելով իրար մէջ. պարզ չէ, թէ գիւղական համայնքները ինչպէս են օգտուում թաղաւորական անտառներից, արօտատեղերից և ազատ հողերից, որ կապալով են տրւում. գիւղերի հողերը, սակաւ բացառութեամբ, սահմանւած չեն. բաւականաչափ տեղեկութիւններ չը կան երկրի զանազան կողմերի գիւղացիների գրութեան մասին. թաղաւորական ազատ հողերը, որ կարող էին ծառայել գիւղացիների պէտքերին, զրականապէս չափոնի չեն կացուցւած:

Այդ պատճառով, Անդրկովկասի պետական գիւղացիների հողաւին վիճակը օրէնսդրական կերպով վճռելուց առաջ, հարկաւոր դատւեց նախ ուսումնասիրել այդ գիւղացիների տնտեսական դրութիւնը՝ տեղն ու տեղը հաւաքելով տեղեկութիւններ, որոնք կարող կը լինին լուսաւորել այն ճանապարհը, որը տանում է դէպի խնդրի կանոնաւոր լուծումը: Այդ նպատակով 1883 թ. սկզբում պետական կալւածների մինիստրութիւնից մի առանձին խումբ կազմւեց տասը աստիճանաւորներից բաղկացած: Այդ աստիճանաւորները, ուղեցոյց ունենալով իրանց տւած ծրագիրը և հրահանգը, 1884 թւականին, վեց ամսում հետադասեցին 578 գիւղ, 35,426 ծուխով և 131,851 երկու սեռի բնակիչներով: Ձմեռւալ եղանակի սկզբներում խումբի աստիճանաւորներին լանձնւեց իւրաքանչիւր գիւղի մասին առանձին առանձին հաւաքած տեղեկութիւնների մշակումը: Կասկած չի կարող լինել, որ ուսածքների հետեանքների կարելոյն չափ ընդարձակ հրատարակութիւնը պէտք է ձեռնարկած գործին իրական օգուտ բերէ: Քանի որ կարելի է գիտութեան և փորձի մարդկանց ցուցմունքներից իւր ժամանակին օգտուել, օգտակար դատւեց չը փտաձգել 1884 թ. աշխատանքների ապագրութիւնը մինչև նոցա ընդհանուր մշակումը, այլ հրատարակել նոցա առանձին տարակներով:

Բայց ահաւասիկ և 7 հատորների բովանդակութիւնը, որի առիթով պէտք է ասենք, որ իւրաքանչիւր լօղած կրում է այս անփոփոխ վերնագիրը՝ Տնտեսական վիճակը (այս ինչ) նահանգի, (այս ինչ) գաւառի պետական գիւղացիների, Հետադատութիւն (այս անուն): Բայց մեր հետեւալ ցուցակում կարճ կերպով փշել ենք միմիայն հետադատած տեղիւրի և հետադատողների անունները:

Աւելցնենք նաև, որ հետադատողների թիւը հետեւալ 1885 թ. մի տասնով էլ աւելացաւ և վերջին տասը՝ տեղացիներինցն էին:

I. ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ. (6 տետրակներով, միասին 787 էր.)

Յառաջարան: Բարձրագոյն հաստատւած 29 լուծ. 1889 թ. Մինիստրների կոմիտեի Անդրկովկասեան վճիռը ձմեռնալին և ամառնալին արտատեղերի մասին:—Հրահանգ, տւած Կովկաս ուղարկւած աստիճանաւորներին՝ պետական գիւղացիների տնտեսական վիճակը հետադատելու համար:

Շորադեալ, Ալէքսանդրօպօլի գաւառում, Երևանի նահանգում: Հետադատ. Ս. Պ. Զելինսկի:

Յուցակ հեղինակութիւնների, որ կարարեցրութիւն ունին Անդրկովկասի պետական գիւղացիների տնտեսական վիճակի հետ: Կազմեց Ա. Դ. Ներիցեան:

Գերմանական գաղթականների տնտեսական վիճակը Անդրկովկասում: Հետադատ. Ն. Կ. Նիկիֆօրով:

Լեյզոմի գաւառ, Գուլիստի նահանգում: հետադատեց Դ. Պ. Նոսովիչ:

Գուլիստի գաւառի հիւսիս-արեւելեան մասը: Հետադ. Ֆ. Տ. Մարկով:

Նոր-Բալադէտի գաւառի հարաւ-արեւմտեան մասը, Երևանի նահանգում: Հետադ. Ա. Վ. Պարվիցկի:

Օգուրգետի գաւառ, Գուլիստի նահանգում: Հետադ. Ս. Կ. Ալիֆին և Դ. Պ. Նոսովիչ:

Խիզանների դրութեան մասին (վրաստանում) նիւթեր: Յօդւած Մ. Ն. Կուչանի:

Խիզանները և խիզանութիւնը: Զեկուցում Խ. Ա. Վերմիչևի:

Գիւղացիական ընթերցում Գանձակի նահանգում: Քաղաք Մ. Ն. Կուչանի հաշից:

Բաքուի գաւառ. Հետ. Պ. Ն. Նազօղինսկի:

Նախիջևանի գաւառի արևմտեան մասը, Երևանի նահանգում: Ն. Կ. Նիկիֆօրով:

Օրդուբաթի վիճակը, Նախիջևանի գաւառում, Երևանի նահանգում: Պ. Ն. Նազօղինսկի:

Շարուր-Գարալադեալի գաւառի արևմտեան մասը, Երևանի նահանգում: Ա. Գ. Դեկոնսկի:

II. ԵՐԿՐՈՐԻ ՀԱՏՈՐ (Երեք տետրակով, միասին՝ 789 երես).

Բաշինի գաւառ, Քութալիսի նահանգում: Հատազօտ. Ի. Լ. Բախտաձէ:
Կուքալի գաւառի հարաւային մասը, Բաքուի նահանգում: Պ. Ն. Եւ-
գօղինսկի:

Կուքալի գաւառի հիւսիսային մասը, Բաքուի նահանգում: Պ. Վ.
Կօսլարեանկի:

Բաքուի գաւառի արեւմտեան մասը: Պ. Ն. Եւգօղինսկի:

Ղազախի գաւառ, Գանձակի նահանգում: Ա. Երիցեան:

Սենակի և Զուզդիդի գաւառներ, Քութալիսի նահանգում: Դ. Յ.

Նօսովիչ:

III. ԵՐՐՈՐԻ ՀԱՏՈՐ. (մասն 1. 512 եր. մասն 2. 282 եր. = 794 եր.).

Երևանի գաւառ: Ֆ. Տ. Մարկով:

Սուրմալուի գաւառ, Երևանի նահանգում: Ա. Խանաղեան:

Փամբակի վիճակ և Շորապեալի վիճակի հիւսիսային մասը՝ Ալեքսան-
դրօպօլի գաւառում, Երևանի նահանգում: Ս. Պ. Զեւրինսկի:

Ախալցխայի և Ախալքալաքի գաւառներ, Թիֆլիսի նահանգում: Խ.
Վերմիշեւ:

IV. ԶՈՐՐՈՐԻ ՀԱՏՈՐ. (մասն 1. 385, մասն 2. 385 = 770 երես).

Ջանգեղուրի գաւառ, Գանձակի նահանգում: Ս. Զեւրինսկի:

Շուշալ և Զեքրալիի գաւառներ, Գանձակի նահանգում: Ա. Դեկոնսկի:

Նոր-Բաղդէտի գաւառի հիւսիս-արեւելեան մասը, Երևանի նահան-
գում: Ա. Պարվիցկի:

Շարուր-Դարալագեաղի գաւառի հիւսիս-արեւմտեան մասը, Երևանի
նահանգում: Ա. Պարվիցկի:

Սղեախի գաւառ, Թիֆլիսի նահանգում: Ա. Մ. Արղութեան:

V. ՀԻՆԳԵՐՈՐԻ ՀԱՏՈՐ (մասն 1. 571 եր. մասն 2. 295 = 866 եր.).

Թելաւի գաւառ, Թիֆլիսի նահանգում: Ա. Արղութեան:

Թիֆլիսի գաւառ, Ս. Վ. Մաչարելի:

Թիօնեթի գաւառ, Թիֆլիսի նահանգում: Մ. Վ. Մաչարելի:

Դուշեթի գաւառ, Թիֆլիսի նահանգում: Ն. Կ. Նիկիթօրով:

Շորապեանի գաւառ, Քութալիսի նահանգում: Ի. Լ. Բախտաձէ:

VI. ՎԵՅԵՐՈՐԻ ՀԱՏՈՐ (մաս. 1. 309 եր. մ. 2. 435 = 744 եր.).

Նուխալ գաւառ, Գանձակի նահանգում: Ա. Արասխանեանց:

Գօրալ գաւառ, Թիֆլիսի նահանգում: Ս. Մաչարելի:

Գօկչալի և Շամախու գաւառներ, Բաքուի նահանգում: Ն. Աբէլեան:
 Զիւանշիրի գաւառ, Գանձակի նահանգում: Ա. Խանաղեան:

VII. ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ. (765 էր.).

Գանձակի գաւառ, Ն. Աբէլեան: (Յովս. Տէր-Մովսէսեան և)
 Արեշի գաւառ, Գանձակի նահանգում: Ա. Արասխանեանց:
 Քութալիսի գաւառի հարաւարեւմտեան մասը: Ի. Օ. Իօսելեանի:
 Զեւաթի գաւառ, Բաքուի նահանգում: Ս. Կ. Ալիֆին:
 Բօրչալուի գաւառ, Թիֆլիսի նահանգում: Ա. Նրիցեան:
 Լենքորանի գաւառ, Բաքուի նահանգում: Դ. Ա. Կիստենեօլ:
 Ա.

Առաջիկայ Ա-ում, ի միջի ալլոց, տեղ կը բռնեն հետեւեալ գրքերը:

1. Յիսնամեակ Նրեանի Թեմական Դպրոցի:
2. Նաւասարդեանց Տիգրան. Հէքիաթներ. 1—5 գր.
3. Յովսէփեանց Ղաղարոս քահանայ. Քնարիկ մանկական:
4. Աղափրեանց, Դրիգոր Լալիսի. Կրօնական խորհրդածութիւններ: